Վտանգ չը կայ. որ այդ գործողութիւնից առաջ կը գայ կռիւ, վտանգ չը կայ, որ աւելի մեծ դժբաղդութիւն առաջ կը գայ, քան թէ այժմ կայ: Մենք աւելի հակված ենք ընդունելու, որ Ռուսաստանը աւելի առաջ կը գնայ, եթէ Թիւրքիան շարունակի իր բռնութիւնը քրիստոնեաների դէմ:

Մի օր, և այդ օրն էլ հեռու չէ, ռուս ժողովուրդը այլ ևս երկար չի համբերի և կը լսէ այն օգնութիւն խնդրող ձայնը, որ հնչում է հաւատակիցների կողմից, և Հայաստանը Թիւրքիայից բաժանվելով՝ կը միանայ Ռուսաստանի հետ:

Ոչ մի պետութիւն աշխարհիս մէջ, բացի Մեծ Բրիտանիայից, տրամադիր չի լինի այդ բանի առաջն առնելու, և մեծ բրիտանական ոչ մի հիմնարկութիւն երբէք չի համաձայնվի այդ տեսակ չնչին պատճառի համար մեծ պատերազմ սկսել: Պարլամենտը չի ցանկանայ այդ տեսակ վճիռ ստորագրել և վերջապէս ժողովրդի մեծ մասը այդ տեսակ պատճառից առաջ եկող կռուի վրա կը նայի իբրև բարոյական անկման վրա: Եթէ երկու պետութիւնները, Անգլիան և Ռուսաստանը գործեն միասին և ապահովեն Հայաստանի վիճակը, ամեն ինչ խաղաղութեամբ կանցնի:

«Spectator»

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԳՐԻԲՈԵԴՕՎԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

(Նրա ծննդեան 100-ամեայ տարեդարձի առիթով)

I

Երէկ, յունվարի 4-ին, լրացաւ «Горе отъ ума» կոմէդիայի տաղանդաւոր և դժբախտ հեղինակի ծննդեան հարիւրամեայ տարեդարձը, որը, ինչպէս յայտնի է, թաղված է Թիֆլիսում ս. Դաւիթի վանքում, Մթածմինդա սարի վրա:

Ճիշդ 100 տարի առաջ, 1795 թ. յունվարի 4-ին ծնվեց մի մարդ, որին վիճակված էր ռուս գրականութեան աստղերից մինը լինելու:

Գրիբոեդով շատ թշուառ վախճան ունեցաւ: 1829 թ. յունվարի 30-ին, Պարսկաստանի մայրաքաղաքում, Թէհրանում, սպանվեց Գրիբոեդովը և նրա մարմինը ամբողջ 2 օր քաշկռտվեց փողոցներում պարսիկ խառնիճաղանճ ամբոխի նախատինքներին ենթարկված: Նա սպանվեց իբրև ռուս պետութեան լիազօր դեսպան և մինիստր:

Սարսափելի յանդգնութիւն էր այդ մի երկրի կողմից, որ դեռ նոր էր ճաշակել յաղթական ռուս զէնքի ոյժը և իբրև յաղթված, խոնարհել էր մեծ զոհաբերութիւններ անելով յաղթողի առաջ: Սարսափելի պատիժ և վրէժխնդրութիւն էր սպասվում Գրիբոեդովի հայրենիքի կողմից, և ծերունի Ֆաթալի Շահը, որը մոռացած առօրեայ հոգսերը և վիշտերը, նորից անձնատուր էր եղել բանաստեղծութեան, սոխակ-վարդի երգերին, հուրի մալականերին, սթափվեց, զգաց պատժի ծանրութիւնը և շտապեց իր գեղեցկատեսիլ որդուն, Խօսրով Միրզայ շահզադէին ուղարկել Ռուսաստան, և վիզը մի թուր ձգած, չոքել Նիկոլայ կայսրի առաջ, արտասանելով այս աղերսագին խօսքերը. «իմ անմիտ, տգէտ ժողովրդի գործած յանցանքի համար, թափված ռուս թանգագին արիւնի համար, ահա քեզ հարազատ ժառանգս և թուրս. սպանիր նրան և արիւնը լուացիր արիւնով»:

Եւ այն րոպէին, երբ թշուառ երիտասարդ շահզադէն ներկայացնում էր թուրը և պարանոցը ու մտքում կարդում էր գուցէ «քեալմէի շահադաթը» (խոստովանութեան հանգանակը), նրա ականջին հնչեց մեծահոգի կայսրի խօսքերը. «Վեր կաց, արքայորդի, ես արիւնը չեմ կամենում արիւնով լուանալ»:

Ասում են Խօսրով Շահզադէ այնքան զգացված էր քրիստոնեաների այդ վարմունքով, որ որոշել էր մնալ Պետերբուրգ և այդտեղ ուսում ստանալ: Սակայն նա պէտք է վերադառնար և այն արիւնը, որ խնայեց թափել ռուսաց կայսրը, թափեց նոյն իսկ իր հարազատ եղբայրը, նրա դիակը շինելով իբրև պատուանդան՝ գահը բարձրանալու:

Գրիբոեդովի սպանութեան բոլոր մանրամասնութիւնները դեռ լաւ չեն պարզված և միմեանց հակասող շատ զրոյցներ կան:

Պարսկաստան գտնված ժամանակս, ես շատ հետաքրքիր էի ճշգրիտ եղելութիւնը իմանալ, մանաւանդ որ, ինչպէս պատմում են, այդ դժբախտ անցքի ժամանակակիցներ և ականատեսներ դեռ շատ կան: Եւ ահա մի օր, Թաւրիզում, ցոյց տուեցին մի հայ ծերունի, չափար կամ ղուլամ Համբարձում անունով, որը Գրիբոեդովի ղուլամն է եղել (սուրհանդակ). սա այդ ժամանակ և սպանութեան րոպէին նրա հետ էր և իր անձով պաշտպանում էր դեսպանին, և դրա համար էլ որոշ թոշակ էր ստանում ռուս կառավարութիւնից:

Չափար Համբարձումը միայն մի քանի տարի առաջ մեռաւ: Իմ նրան տեսած տարին, 1883 թւին, դեռ մի առոյգ, ժիր ծերունի էր, մօտ 80-ամեայ և շատ լաւ յիշում էր դժբախտ անցքի բոլոր մանրամասնութիւնները:

Մի օր խնդրեցի նրան պատմել ինձ այդ անցքը: Նա պատմեց: Միւս անգամ առաջ կը բերենք ծերունու պատմածը:

Հ. Ա.

## ՆԱՄԱԿ ՍՈՒԽՈՒՄԻՑ

—

Դեկտեմբերի 20-ին

Չորս օր առաջ այստեղ եկաւ պ. Ֆօնրէնգարտէնը, որը ճանապարհորդում է ոտքով և մտադիր է ամբողջ երկրագունդը շրջել, ի հարկէ, ծովերը նաւով, բայց ցամաքը ոտքով. նա յոյս ունի ամբողջ երկրագունդը անցնել $4^1/_2$ տարվայ ժամանակամիջոցում:

Նա դուրս է եկել օգոստոսի 15-ին Րիգայից, անցել է մինչև Րօստով և Նովորոսիյսկ, որտեղից շոգենաւով եկաւ այստեղ և այսօր դուրս եկաւ այստեղից Օչեմչիրի, Զուգդիդի, Նովօսենակի, Քութայիս, ապա պիտի անցնի Թիֆլիս, այնտեղից Պարսկաստան Ջուղայի վրայով, այնտեղից Սիբիր և Սախալին, յետոյ անցնելու է Եապօնիա, այնտեղից ծովով կերթայ Ամերիկա.—Ամերիկայով ոտքով անցնելուց յետոյ, ծովով կանցնի Պորտուգալիայ Լիսսաբօն, յետոյ Սպանիայով, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա և պէտք է վերադառնայ Ռուսաստան, Րիգա:

Բոլոր պատահողներին խնդրում է, որ իր մատեանում գրեն, թէ իրան պատահել են ոտքով գնալիս, և որտեղ:

Իր ճանապարհորդութիւնը վերջացնելով, մտադիր է հրատարակել իր ճանապարհորդական տպաւորութիւնները մանրամասնօրէն, պատանիների համար:

Այս ճանապարհորդութիւնը այնքան հետաքրքիր է, որ մեզ մնում է ցանկալ ճանապարհորդին աջողութիւն՝ իր նպատակին հասնելու:

***

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երեքշաբթի օր, յունվարի 3-ին, կովկասեան կառավարչապետը փոխադարձ այցելութիւն արեց ամենայն հայոց կաթողիկոսին:

—

Յունվարի 1-ին, ամենայն հայոց կաթողիկոսի կողմից երկու եպիսկոպոսներ այցելեցին Վրաստանի էկզարխ սրբազան Վլադիմիրին, շնորհաւորելու նոր տարին: Նոյն օրը Վրաստանի էկզարխը այցելութեան եկաւ Վեհափառ կաթողիկոսին: Յաջորդ օրը, յունվարի 2-ին, Վեհափառը այցելեց Վրաստանի էկզարխին, և նրա հետ միասին գնաց տեսնելու Սիօնի մայր եկեղեցին:

—

Մեզ հաղորդում են Կ. Պոլսից, որ Թօքաթում տեղի են ունեցել մեծ անկարգութիւններ:

—

Երէկ, դեկտեմբերի 4-ին, Թիֆլիսի Ս. Դաւիթ եկեղեցում տեղի ունեցան հոգեհանգիստներ հանգուցեալ ռուս գրող Ա. Գրիբոեդովի գերեզմանի վրա: Առաջին հոգեհանգիստը կատարվեց Արտիստական ընկերութեան կողմից, իսկ երկրորդը՝ մամուլի ներկայացուցիչների կողմից: Վերջին հոգեհանգստին, քահանան վրացերէն լեզուով խօսեց մի ազդու ճառ: Հոգեհանգստին ներկայ էր մեծ բազմութիւն:

—

«Մշակի» խմբագրութիւնը յայտնում է իր յարգանքը և անկեղծ շնորհակալութիւնն այն անձանց, որոնք հեռագիրներով և նամակներով շնորհաւորեցին «Մշակի» 23-րդ տարեդարձը:

—

Լոյս տեսաւ յայտնի գիտնական Մակսիմ Կովալեվսկու գիրքը, ժամանակակից ռամկապետութեան ծագման մասին՝ «Происхожденіе современной демократіи» վերնագրով: Հեղինակը՝ բացի յայտնի պատմաբանների շարադրութիւններից, ինչպէս են Տօկվիլ, Տէն և ուրիշներ, օգտվել է և նոր՝ մինչև այժմ անյայտ եղած նիւթերից: Գիրքը նկարագրում է Ֆրանսիայի հասարակական, քաղաքական դրութիւնը անցեալ դարու կիսում և քննում է այն ազդեցութիւնը, որ ունեցել է ֆրանսիական գործողների վրա Անգլիայի և Ամերիկայի քաղաքական գրականութիւնը և կեանքը:

—

Մեզ հետևեալ տեղեկութիւնն են հաղորդում Թիւրքիայի Սամսօն քաղաքից, դեկտեմբերի 28-ից. «Տաճիկ կառավարութեան կողմէ Հայաստան ղըրկված՝ 4 հոգիէ բաղկացած (Ապդուլլահ և Թէֆֆիք փաշաներ ու 2 պաշտօնեայներ) քննիչ յանձնախումբը ամսիս 23-ին Տրապիզոն վերադառնալով՝ ուղևորեցաւ դէպի Կ. Պոլիս: Ասոնց պաշտօնը յանձնուեցաւ հիւպատոսական մարմնէ ու տաճիկ ուրիշ 2 պաշտօնեայներէ կազմուած յանձնախմբին»:

—

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Սիսի հանգուցեալ Տ. Մկրտիչ կաթողիկոս՝ աթոռին պատկանող հրովարտակները, զոհարեղէնները, կալուածական կարևոր թուղթերը ամէնքն ալ միշտ սնտուկի մը մէջ դրած իր հետ տանելու սովորութիւն ունէր: Սնտուկը, թէպէտ կնքուած է, բայց և այնպէս շատ վախ կայ թէ այսպէս թէ այնպէս վտանգէ զերծ չը մնան Աթոռէն հեռի գտնուող այդ թանկագին վաւերագրերը ու իրեղէնները»:

—

Ներկայումս Թիֆլիսի քաղաքի զինուորակոչական ատեանը կազմում է այն երիտասարդների ցուցակը, որոնք պէտք է զինուորական ծառայութիւն մտնեն և որոնք ծնվել են 1873 թւի հոկտեմբերի 1-ից սկսած մինչև 1874 թւի հոկտեմբերի 1-ը: Խորհուրդ կը տայինք այդ թւերին ծնված երիտասարդներին առաջուց ցուցակագրվել զինուորակոչական ատեանում, ներկայացնելով իրանց մէտրիքական վկայականները, որով կապահովեն իրանց առանց վիճակահանելու զինուորական ծառայութիւն մտնելու վտանգից, որ շատ յաճախ տեղի է ունենում Թիֆլիսի բնակիչների մէջ, մանաւանդ հայերի և վրացիների մէջ:

—

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու կէսից:

—

Ջրօրհնէքի տօների պատճառով «Մշակի» յաջորդ, 3-դ համարը լոյս կը տեսնի ոչ թէ շաբաթ օր, յունվարի 7-ին, այլ երեքշաբթի օր, յունվարի 10-ին: Նրանից յետոյ լրագիրը կը շարունակվի հրատարակվել իր սովորական կարգով:

—

Դեկտեմբերի 31-ին վախճանվեց բելգիական փոխ-հիւպատոս, Վասիլ Մեղվինով, որը շատ լաւ ծանօթ էր Թիֆլիսի հասարակութեան: Հանգուցեալի թաղումը տեղի ունեցաւ յունվարի 30-ին, ներկայութեամբ նրա յիշատակը յարգող բաւականաչափ հասարակութեան:

—

Մեզ ուղարկված է մի նոր գիրք, «Աշոտ երկաթ» վերնագրով, հեղինակութիւն Բ. Այվազեանի: Սա նոյն անունը կրող պատմական վէպի երկրորդ մասն է: Գինն է 75 կոպէկ:

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ա. Մ. Գարագաշեանի «Քննական պատմութիւն հայոց» աշխատութեան երկրորդ մասը, որ լոյս է ընծայել Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը: Գիրքը բաղկացած է 277 մեծադիր երեսներից, տպված է մեծ խնամքով և արժէ 1 րուբլի:

—

Մոսկվայից, Մ. Շօրշօրեան ուղարկել է մեզ 20 րուբլի, որպէս զի այդ փողով «Մշակի» 1895 թւի երկու օրինակ ուղարկենք երկու աղքատ հիմնարկութեան: Մենք որոշեցինք «Մշակի» այդ օրինակները ուղարկել Մեծ-Արևմալի և Գեչրլու գիւղերի հայոց դպրոցներին:

—

Բագուից, Առաքել Ծատուրեանց նուիրեց «Մշակի» 1895 թւի մի օրինակ Զանգեզուր գաւառի Տեղ գիւղի հայոց դպրոցին:

—

Աստրախանից, Ղ. Տէր-Գաբրիէլեանց նուիրեց «Մշակի» 1895 թւի մի օրինակ Սագարեջոյի ուսումնարանին:

—

Օդէսայի «Одесскій Листокъ» լրագիրը, որ մեծ համակրանքով է վերաբերվում հայոց հարցին, վերջին համարներից մէկում տպագրել է բուռն համակրութեամբ ներշնչված մի գեղեցիկ յօդուած:

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 25-ին, կիրակի օր, հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Արծրունու մահվան երկրորդ տարեդարձի առիթով: Հոգեհանգստի ժամանակ, Գարսեան Աղազադեանց մի ճառ ասեց՝ տարեդարձ կատարելու բարոյական նշանակութեան մասին: Երեկոյեան գրականական երեկոյթ կար ի յիշատակ Արծրունու, որտեղ օրիորդներից, տիկիններից և երիտասարդներից մի քանի հոգի խօսեցին: Երեկոյթը աջող անցաւ: Թէ հոգեհանգստին և թէ երեկոյին ներկայ էին Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, Հմայեակ վարդապետ Արշարունի, Բագրատ վարդապետ Թաւաքալեանց, մի քանի սարկաւագներ և խուռն բազմութիւն»:

—

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մի քանի անձինք աշխատում են այստեղ մի նոր բարեգործական ընկերութիւն հիմնել, չը նայելով որ քաղաքումս գոյութիւն ունեն երկու այլ նոյնանման հիմնարկութիւններ, այն է՝ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը և աղքատանոց: Եթէ այդ նոր բարեգործական ընկերութիւնը բացվի, էլ այնուհետև ինչ կը մնայ անելու հներին, որոնց գործունէութիւնը մի առանձին մեծ ոյժ չէ ներկայացնում հէնց այն պատճառով, որ հասարակութիւնը չափազանց անտարբեր է վերաբերվում դէպի այդ հիմնարկութիւնները: Մեր կարծիքով հարկաւոր էր, որ գոյութիւն ունեցող հիմնարկութիւնները խրախոյս և աջակցութիւն գտնէին անխտիր բոլորի կողմից, աւելի մեծ ուժով առաջ տանելու իրանց գործունէութիւնը, քան թէ ձեռնարկել մի նոր հիմնարկութիւն էլ ունենալու, որը չէ կարող աննպաստ ազդեցութիւն չանել մնացած երկու նոյնպէս համակրելի հիմնարկութիւնների գործունէութեան վրա»:

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը որոշել էր 50 րուբլի տալ չքաւոր աշակերտների շորերի համար, բայց այդ գումարը այնքան չնչին էր, որ հազիւ 6 հոգու բաւականանար: Տեղացի երկու պարոն՝ Ա. Մանուչարեանը և Գ. Յակոբեանը, տեսնելով որ շատերն են օգնութեան կարօտ և Բարեգործական ընկերութիւնը կարող չէ բաւականութիւն տալ բոլորին, նուիրեցին 30 արշին մահուդ բաճկոնացու և 60 արշին կտոր շրջազգեստ համար: Դերձակ Գ. Նաւասարդեանց ձևեց այդ մահուդից աշակերտների համար հանդերձներ, իսկ մի քանի տիկիններ էլ ձրի կարեցին: Վերոյիշեալ պարոնները և տիկինները անկասկած արժանի են շնորհակալութեան»:

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են դեկտեմբերի 25-ից. «Վերջապէս ընտրութիւնը կայացաւ, ասում էր այսօր Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ամեն մի անդամ: Ամբողջ ամիս է վարչութեան երկու անդամի ընտրութեան համար ամեն կիրակի ընտրութիւն է նշանակվում, գալիս են մարդիկ, առաջարկվում են թեկնածուներ և ոչ մէկը $^3/_4$ ձայների առաւելութիւն չը ստանալով՝ սևանում է: Այսօր հազիւ հազ ընտրվեցին Մարուքեան և Մելքոնեան տեղական ճիւղի վարչութեան անդամ: փոխանդամներ ընտրվեցին՝ տ. Շ. Յարութիւնեան, օր. Պ. Մարտիրոսեան և Ս. Տէր-Կարապետեան: Վերստուգող յանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝ Մատթէոսեան, Քիւրքչեան և Քուփալեան: Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան վրա մեծ պարտք կայ ընկերութեան միջոցները շատացնել և միայն չը բաւականանալ գրադարան-ընթերցարանով, այլ հոգալ և շատ ուրիշ նոյնպէս կարևոր պէտքեր, իսկ գրադարան-ընթերցարանը մատչելի դարձնել ժողովրդին, մինչև այժմ օգտվում են շատ սահմանափակ թւով մարդիկ»...

